



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ  
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ  
հակադաճույցի ու կենտրոն

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ  
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2014-2015թթ.**

ԹԻՅԿ  
Երևան 2015



OPEN SOCIETY  
FOUNDATIONS

Ծրագիրն իրականացվել է Բաց հասարակություն հիմնադրամներ -  
Հայաստանի ֆինանսական օժանդակությամբ:

### **Ծրագրի աշխատակազմ**

Վարուժան Հոկտանյան  
Ծրագրի համակարգող

Արտակ Մանուկյան  
Գնումների գծով փորձագետ

Խաչիկ Հարությունյան  
Թարգմանիչ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն  
Հայաստան, Երևան 0019,  
Անտառային փողոց, տուն 164/1  
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689  
Ֆաքս՝ (+374 10) 569519  
Էլ. փոստ՝ info@transparency.am  
www.transparency.am

## Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	4
Ներածություն .....	5
Մեթոդաբանություն.....	7
Մոնիտորինգային ուղղություն 1.....	10
Օրենսդրական փոփոխությունների/զարգացումների մոնիտորինգ .....	10
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԹԻՅԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ.....	14
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	17
Մոնիտորինգային ուղղություն 2.....	18
Բողոքարկման համակարգի զարգացումներ .....	18
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	18
2014թ.Բողոքների քանակական բնութագիրը .....	19
Գնումների բողոքարկման որակական բնութագիրը.....	21
Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների ներգրավվածության մոնիտորինգ .....	22
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	25
Բողոքարկման համակարգի մոնիտորինգի ամփոփում .....	27
Մոնիտորինգային ուղղություն 3. Մեկ անձից գնումներ.....	27
3.1 Մեկ անձից գնումների տվյալների թարմացման հաճախականությունը և ամբողջականությունը: .....	29
3.2. Մեկ անձից գնումների իրականացման հիմքերը: .....	30
3. 3 Պայմանագրի կնքման և պայմանագրի կատարման ժամանակային տարբերությունները: .....	30
3.4 Գնումների պայմանագրերի արժեքները .....	30
Մեկ անձից ձեռքբերումների մոնիտորինգի ընթացքում բացահայտված հիմնախնդիրներ.....	45
Մեկ անձի հիմքով նկատված հիմնախնդիրներ .....	47
Մոնիտորինգային ուղղություն 4.Շրջանակային համաձայնագրերի (ՇՀ) մոնիտորինգ .....	50
Սեպտեմբեր 2014 .....	52
Ապրանքներ .....	52
Գումարային վերլուծություն.....	52

Քանակային վերլուծություն .....	53
Ծառայություններ.....	53
Գումարային վերլուծություն.....	54
Քանակային վերլուծություն .....	54
Հոկտեմբեր 2014.....	55
Ապրանքներ .....	55
Գումարային վերլուծություն.....	56
Քանակային վերլուծություն .....	57
Ծառայություններ.....	57
Գումարային վերլուծություն.....	58
ՆՈՅԵՄԲԵՐ 2014.....	60
Ապրանքներ .....	60
Գումարային վերլուծություն.....	60
Ծառայություններ.....	62
Դեկտեմբեր 2014.....	64
Ապրանքներ .....	64
Քանակային վերլուծություն .....	65
ՀՈՒՆՎԱՐ 2015.....	68
Ապրանքներ .....	68
Գումարային վերլուծություն.....	68
Փետրվար 2015.....	71
Ապրանքներ .....	71
Մարտ 2015 .....	76
<b>Գումարային վերլուծություն.....</b>	<b>76</b>
Քանակային վերլուծություն.....	77
Ծառայություններ.....	77
Գումարային վերլուծություն.....	78
Քանակային վերլուծություն .....	79
Գումարային վերլուծություն.....	80
Քանակային վերլուծություն .....	80
ԾՅ մասով նկատված հիմնախնդիրներ .....	82
Առաջարկություններ և եզրակացություններ.....	83

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ 0

Հավելված 2. Մեկ անձից գնումների տվյալների ներկայացման թերությունները ֆիլտրման ժամանակ (2014թ. համար նախագահի աշխատակազմի օրինակով)0

Հավելված 3. Մեկ անձի հիմքով գնում իրականացրած պատվիրատուների բնութագիրը2

## Հապավումների ցանկ

ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
Էլ. գնումներ	Էլեկտրոնային գնումներ
ԳՍՕ	Գնումների մասին օրենսդրություն
ՇՀ	Շրջանակային համաձայնագրեր
ՊԸ	Պարզեցված ընթացակարգեր
ԳԱԿ	Գնումների աջակցման կենտրոն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԲՀ	Բողոքարկման հանձնաժողով
ԲԽ	Բողոքարկման խորհուրդ
ԹԻՀԿ	Թրանսփարենսի հիթերնեյշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն Հասարակական Կազմակերպություն
ՄԵԿ անձ	Բանակցային ընթացակարգ առանց հայտարարելու

## Ներածություն

Հայաստանի Հանրապետության հանրային գնումների համակարգը մեծ դեր է խաղում երկրի տնտեսության մեջ: 2014թ. ՀՀ-ում պետական մարմինների կողմից իրականացված գնումների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 202 մլրդ. ՀՀ դրամ<sup>1</sup>, որը կազմում է ՀՀ 2014թ. պետական բյուջեի մոտ 16.4%-ը և նույն թվականի ՀՆԱ-ի մոտ 4.2%-ը: Եվս շուրջ 52 մլրդ. ՀՀ դրամի գնումներ 2014թ.-ին իրականացվել է համայնքային մարմինների կողմից:

Հանրային գնումների համակարգի արդյունավետության, թափանցիկության և ներքին բարեվարքության մակարդակների բարելավումը կարող է նպաստել երկրի կայուն ու երկարաժամկետ տնտեսական զարգացմանը՝ լրացուցիչ գործոն հանդիսանալով ՓՄՁ խթանման և նորարարություն զարգացման համար:

Միաժամանակ, Հայաստանում, ինչպես աշխարհի շատ երկրներում, հանրային գնումների ոլորտը, նրանում շրջանառվող մեծ գումարների պատճառով, կարող է պարարտ հող հանդիսանալ զանազան չարաշահումների և կոռուպցիոն դրսևորումների համար: Դրա մասին են վկայում նաև թե Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) վերլուծությունները, թե հայաստանյան մամուլում վերջին տարիներին տեղ գտած բազմաթիվ հրապարակումները, որոնցում բերվել են ուռճացված գներով, իրենց նպատակներին չծառայող և այլ տիպի «տարօրինակ» հանրային գնումների բազմաթիվ փաստեր: Ունենալով նախկին խորհրդային հանրապետությունների շարքում հանրային գնումները կարգավորող լավագույն օրենսդրական դաշտերից մեկը՝ պրակտիկայում, ինչպես ցույց են տվել թե տեղական, և թե միջազգային կազմակերպությունների ուսումնասիրությունները, այդ օրենսդրության կիրարկումը շարունակում է մնալ անբավարար: Շարունակում են մեծ տոկոս կազմել մեկ անձից կատարվող գնումները, կան խնդիրներ կապված գնումների բողոքարկման համակարգի հետ: Շարունակում է փոքր մասը էլեկտրոնային գնումների ծավալը իրականացված գնումների ընդհանուր ծավալում: Անհրաժեշտ է շեշտել, որ համակարգում առկա կոռուպցիոն դրսևորումները և այլ չարաշահումները կարող են էապես վտանգել նաև երկրի տնտեսական անվտանգությունը:

Նշված հիմնախնդիրների լուծմանը կարող է նպաստել առկա օրենսդրության կատարելագործումը, իրավական ակտերի պատշաճ կիրարկումը, ոլորտի թափանցիկության ընդլայնումը և հասարակության տեղեկացվածության աստիճանը: Վերջինս էապես կբարելավվի, եթե քաղաքացիական հասարակության ավելի մեծ թվով կառույցների համար այս ոլորտում տեղ գտնող զարգացումներն արժանանան ավելի մեծ ուշադրության:

---

<sup>1</sup> Տես 2014թ. տարեկան հաշվետվությունը՝ պատրաստված Գնումների աջակցման կենտրոնի կողմից - <http://gnumner.am/am/category/349/1.html>

2007 թ.-ից սկսած ԹԻՅԿ՝ սկզբում Բաց հասարակության ինստիտուտ – Բուդապեշտի (2007թ.-ից մինչև 2013թ.), իսկ այնուհետև Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի (2014թ.-ից մինչ այժմ) աջակցությամբ իրականացնում է ՀՀ պետական գնումների համակարգի ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունների նպատակն էր բացահայտել և վերլուծել ՀՀ հանրային գնումների ոլորտում տեղ գտած կոռուպցիոն ռիսկերը և դրանց պատճառները, նպաստել ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության ընդլայնմանը, վեր հանել գնումները կարգավորող օրենսդրության և նրա կիրարկման բացերը և այդ ամենի հիման վրա համապատասխան պետական մարմիններին ներկայացնել առաջարկություններ դրանց հաղթահարման ուղղությամբ:

Սույն հրապարակման մեջ ամփոփված են կազմակերպության կողմից 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ. սեպտեմբեր իրականացված մոնիտորինգային ծրագրի արդյունքները: Մոնիտորինգի են ենթարկվել ողջ 2014 թվականի և 2015թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ հանրային ոլորտում իրականացված գնման գործընթացների որոշ բաղադրիչներ, ինչպիսիք են օրենսդրական դաշտը, մեկ անձից գնումները, բողոքարկման համակարգը և շրջանակային համաձայնագրերը:<sup>2</sup> 2010թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ՀՀ գնումների մասին ներկա օրենքի ընդունումից հետո (ուժի մեջ մտավ 2011թ. հունվարի 1-ից) ներկա ծրագիրը ԹԻՅԿ-ի մոնիտորինգային երրորդ ծրագիրն է և հանդիսանում է նախորդ ծրագրերի, որոնք իրականացվեցին 2011-2012 և 2012-2013 թվականներին, օրգանական շարունակությունը:<sup>3</sup>

---

<sup>2</sup> Հանրային գնումների ոլորտում օրենսդրական զարգացումների մոնիտորինգն ընդգրկում է 2013թ. ապրիլի 1-ից մինչև 2015թ. հունիսի 15-ն ընկած ժամանակահատվածը, իսկ մեկ անձից գնումների գործընթացների մոնիտորինգն ընդգրկում է միայն 2014 թվականն ամբողջությամբ:

<sup>3</sup> Այդ երկու ծրագրերի արդյունքների հիման վրա ԹԻՅԿ-ը հրապարակեց «ՀՀ պետական գնումների մոնիտորինգ» երկհատորյա ուսումնասիրությունը: Հրապարակման էլեկտրոնային տարբերակն առկա է ԹԻՅԿ-ի վեբկայքում – տե՛ս <http://transparency.am/hy/publications/view/98> և <http://transparency.am/hy/publications/view/99>



## Մեթոդաբանություն

### **Օրենսդրության մոնիտորինգի մեթոդաբանությունը**

Օրենսդրության մոնիտորինգի ընթացքում ուսումնասիրվել են 2013 թ. ապրիլի 1-ից մինչև 2015 թ. հունիսի 15 ընդունված նորմատիվաիրավական ակտերը: Բացի այդ իրականացվել է ԹԻՅԿ 2011-2013 թ հաշվետվությունում մատնանշված օրենսդրական հիմնախնդիրների և նշվածի համատեքստում կատարված առաջարկությունների կատարման ընթացքի ուսումնասիրություն:

### **Բողոքարկման համակարգի մոնիտորինգի մեթոդաբանությունը**

Բողոքարկման համակարգի մոնիտորինգի համար հիմք են հանդիսացել գնումների պաշտոնական կայքում ներբեռնված ԲԻՆ ընդունված որոշումները, ԲԻՆ անդամների ցուցակը, ինչպես նաև ԳԱԿ-ի 2014 թ. տարեկան հաշվետվությունը:

Որոշումների ուսումնասիրության հիման վրա առանձնացվել են ԲՅ նիստերին մասնակցած անդամները, որի հիման վրա իրականացվել է ուսումնասիրություն: Բացի այդ բավարարված բողոքների մրցույթների ճակատագիրը պարզելու համար \$Ն հարցում է ուղարկվել, որի արդյունքները լրջագույն մտահոգությունների տեղիք են տվել:

2015 թ. հունիսից իրականացվել է [www.e-gov.am/gnumner/](http://www.e-gov.am/gnumner/) խորագրի մոնիտորինգ, որի արդյունքները ևս վեր են հանել մի շարք թերություններ:

### **Մեկ անձից գնումների մոնիտորինգ**

Մեկ անձից գնումների մասով մոնիտորինգ իրականացնելու և եզրակացություններ կատարելու համար հիմք են հանդիսացել 2014 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թ. մարտի 31-ը [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքում «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնում ներբեռնված տվյալները: Ստորև սահմանվել են մոնիտորինգային չափանիշներ, որոնց մասով իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ:

1. Մեկ անձից գնումների տվյալների թարմացման հաճախականությունը և ամբողջականությունը: Այս չափանիշի միջոցով գնահատվում է «e-gov.am» կայքի մեկ անձից կատարվող գնումներ բաժնում համապատասխան տեղեկատվության ժամանակին և հնարավորինս ամբողջական կերպով մատուցումը: Մոնիտորինգի շրջանակներում պարբերաբար ուսումնասիրվում էր [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք ժամանակին է կայքում գետեղվում և թարմացվում հանրային տեղեկատվությունը (այսինքն՝ պայմանագիրը ստորագրելուց հետո քանի օր անց է այն տեղադրվում կայքում) և որքանով է տեղադրված տեղեկատվությունն ամբողջական:

2. Մեկ անձից գնումների իրականացման հիմքերը:

Այս չափանիշի մոնիտորինգի շրջանակներում վերլուծվել են [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնում տեղադրված ԳՄՕ հոդված 20-ի մաս 5-ով սահմանված հիմքերը 2014թթ. կտրվածքով: Այդ հիմքերի մոնիտորինգի հիման վրա վեր են հանվել նաև դրանց կիրառման միտումները, և կատարվել է համեմատական վերլուծություն:

3. Պայմանագրի կնքման և պայմանագրի կատարման վերջնաժամկետի միջև ընկած ժամանակահատվածը («լագը»): Այս չափանիշի մոնիտորինգի նպատակն է պարզել, թե որքանով է հիմնավորված մեկ անձից գնման ընթացակարգի ընտրությունը ժամանակային հրատապության առումով: Մոնիտորինգի շրջանակներում [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնից ներբեռնվել են 2014 թվականին կնքված բոլոր պայմանագրերը, այնուհետև կատարվել է այդ պայմանագրերում նշված ժամկետների (կնքման և ավարտման) ուսումնասիրություն:

4. Գնումների պայմանագրերի արժեքները:

Սույն չափանիշի մոնիտորինգը նպատակ է հետապնդում վերհանել կոռուպցիոն դրսևորումների տեսանկյունից կասկածելի մեկ անձից գնումները: Մեր տեսանկյունից ռիսկային են հանդիսանում 5 հատ 0-ով վերջացող պայմանագրային արժեքներով գնումները (նման մոտեցումը կարմիր դրոշների մեթոդաբանության տարր է): Այս չափանիշի ուսումնասիրության շրջանակներում [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնից ներբեռնվել են 2014թթ. կատարված բոլոր պայմանագրերը, այնուհետև կատարվել է այդ պայմանագրերում նշված պայմանագրային արժեքների խմբավորում և ուսումնասիրություն:

5. Մեր կողմից կատարվել է մեկ անձի հիմքով պայմանագրերի զտում, մասնավորապես տարանջատվել են այլընտրանքի բացակայությամբ պայմանավորված մեկ անձից ձեռքբերումներ և ոչ օբյեկտիվ մեկ անձից ձեռքբերումներ կատեգորիաների: Մեր կողմից թիրախային են համարվել ոչ օբյեկտիվ մեկ անձից ձեռքբերումները, որի մասով իրականացվել է խորքային ուսումնասիրություն:

6. Կազմակերպությունները, որոնցից 2014թթ. պարբերաբար մեկ անձի հիմքով ձեռքբերումներ են իրականացվել: Այս չափանիշի մոնիտորինգի շրջանակներում [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնից ներբեռնվել են 2014թթ. կնքված պայմանագրերը, այնուհետև կատարվել է այդ պայմանագրերում նշված հաղթողների խմբավորում և ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում կազմվել է ռիսկային ֆիրմաների ցանկ:

3-րդ և 4-րդ մոնիտորինգային չափորոշիչների կիրառության պարագայում ակնհայտ դարձավ, որ պատվիրատուները արմատապես փոխել են իրենց վարքագիծը: Դրանով պայմանավորված մեր *կողմից դիտարկվող ժամանակահատվածում ընտրանքային կարգով կատարվել է մեկ անձի հիմքով պայմանագրերային գների և շուկայական գների համադրություն*:

### **Շրջանակային համաձայնագիր**

Մեր կողմից կառուցվել են վիճակագրական տվյալներ, որոնք ուսումնասիրության են ենթարկվել: Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի օգնությամբ իրականացվել է համակենտրոնացման աստիճանի ուսումնասիրություն՝ ըստ քանակային և գումարային բաղադրիչի: Բացի այդ ուսումնասիրվել են պատվիրատուների համակենտրոնացումը և նրանց կողմից պայմանագիր շնորհված խոշորագույն մատակարարները:

## Մոնիտորինգային ուղղություն 1. Օրենսդրական փոփոխությունների/զարգացումների մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատվածը-2013թ.ապրիլի 1 – 2015թ.հունիսի 15

Դիտարկվող ժամանակահատվածում ԶԶ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք մեծամասամբ պայմանավորված են եղել.

Ա) Էլեկտրոնային գնումների (Էլ. գնումներ) համակարգի ծածկույթի ընդլայնմամբ,

Բ) Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցությամբ:

2013թ. ապրիլի 1-ից հետո ընդունվել են հետևյալ նորմատիվաիրավական ակտերը

### ԶԶ կառավարության որոշումներ

1. 2015թ. մայիսի 21-ի թիվ 527 որոշումով 2013թ. դեկտեմբերի 5-ին հաստատված

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգում» տեղի են ունեցել որոշ փոփոխություններ, որի արդյունքում ընդլայնվել է Էլեկտրոնային գնումների մասնակիցների ցանկը, մասնավորապես ներառվել են Գնումների մասին օրենսդրության (ԳՄՕ) 2-րդ հոդվածի 1-ին մասի “ա” կետով նախատեսված պատվիրատուները, ինչպես նաև ավելացել են որոշ ընթացակարգեր /Շրջանակային համաձայնագրեր(ՇՀ), Պարզեցված Ընթացակարգեր(ՊԸ):<sup>4</sup>

2. ԶԶ կառավարության որոշում 105-Ն<sup>5</sup>

Սույն որոշմամբ բովանդակային առումով կարևոր փոփոխություններ են կատարվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն» որոշման մեջ: Մասնավորապես այս որոշմամբ ամրագրվում է, որ 2015թ. ապրիլի 1-ից, եթե գնման հայտով ներկայացված գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը (այսինքն՝ մինչև 70 միլիոն դրամ ձեռքբերումների պարագայում) ԵԱՏՄ անդամ երկրներին գնային առումով կտրվի 15% նախապատվություն:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի հունիսի 27-ի թիվ 914-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԶԶ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 64-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 2015թ. փետրվարի 10-ին) Գնումների աջակցման կենտրոն (ԳԱԿ) ՊՈԱԿ-ը ԶԶ

<sup>4</sup><https://www.e-gov.am/gov-decrees/item/25773/>

<sup>5</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docid=95754>

ֆինանսների նախարարության (ՖՆ) ենթակայությունից տեղափոխվում է ՀՀ կառավարության աշխատակազմի ենթակայություն:<sup>6</sup>

4. Որոշ խմբագրական փոփոխություններ են կատարվել “Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի “Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող գնումների ընթացքում ներկայացված հայտերը և (կամ) գնային առաջարկները գնահատող հանձնաժողովների կազմավորման ու գործունեության կարգը հաստատելու մասին” N 1356-Ն” որոշման մեջ:

5. Ուժը կորցրած է ճանաչվել “Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների և պետության հիմնարկների կողմից ձեռք բերվող որոշ ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը հաստատելու մասին>> N 441-Ն” որոշումը:

6. Նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ պետք է ներկայացնի «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծի հայեցակարգը:

7. ՀՀ կառավարության որոշում 99-Ն<sup>7</sup>

2015թ. փետրվարի 12-ի ՀՀ կառավարության նիստով ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի թիվ 99-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 2015թ.մարտի 7-ին) հաստատվել են գնումների համակարգողի որակավորման շնորհման և գնումների որակավորված մասնագետների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգերը:<sup>8</sup>

8. ՀՀ կառավարության որոշում 372-Ն<sup>9</sup>

---

<sup>6</sup>ԹԻՀԿ ՀԿ նախկինում, մի շարք առիթներով հրապարակայնորեն բարձրացրել է ԳԱԿ-ի ոչ անկախ լինելու փաստը՝ նկատի ունենալով նրա՝ ՀՀ ֆինանսների նախարարության, որը ՀՀ պետական գնումների համակարգի լիազորված մարմինն է, կառուցվածքում լինելը: Մույն որոշումն այդ առումով կարելի է դիտարկել որպես դրական քայլ ԳԱԿ-ի անկախությունն ընդլայնելու ուղղությամբ: Այնուհանդերձ, նույն տրամաբանությամբ հարկ է վերափոխել բողոքարկման համակարգի ներկայիս կառուցվածքը:

<sup>7</sup><https://www.e-gov.am/gov-decrees/item/25363/>

<sup>8</sup>Նշյալ կարգերի բացակայությունը ներկայացված էր ԹԻՀԿ վերջին հրապարակման (<<ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ.2011-2013թթ.>>) մեջ:

<sup>9</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docid=82691>

Սույն որոշմամբ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 168-Ն<sup>10</sup> որոշման մեջ կատարվեցին որոշ խմբագրական փոփոխություններ և լրացումներ:

9. ՀՀ կառավարության որոշում 441 - Ն<sup>11</sup>

Սույն որոշմամբ որոշ խումբ ապրանքատեսակների համար (358 ապրանքատեսակ) սահմանվեցին տեխնիկական բնութագրեր և ամրագրվեցին այդ ապրանքների ձեռքբերման առավելագույն գները: Գների վերանայումներն իրականացվում են ֆինանսների նախարարի հրամանների հիման վրա:

10. ՀՀ կառավարության որոշում 950- Ն<sup>12</sup>

Սույն որոշմամբ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 168-Ն որոշման մեջ կատարվեցին որոշ խմբագրական փոփոխություններ և լրացումներ: Բացի այդ մշակվեց և ներկայացվեց գնումների միասնական անվանացանկի կառուցվածքը:

11. ՀՀ կառավարության որոշում 1338-Ն<sup>13</sup>

Սույն որոշմամբ ՀՀ կառավարության որոշում 441-Ն-ում կատարվեց փոփոխություն, մասնավորապես ապրանքատեսակների համար սահմանվեցին ծածկագրեր՝ ելնելով գնումների միասնական անվանացանկի կառուցվածքից:

12. ՀՀ կառավարության որոշում 1370-Ն<sup>14</sup>

Սույն որոշումը նպատակ ունի կանոնակարգելու էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը:

13. ՀՀ կառավարության որոշում 206-Ա<sup>15</sup>

Սույն որոշմամբ ՀՀ ՊՆ թույլատրվում էր ձեռք բերել 441-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական բնութագրերից տարբերվող տեխնիկական բնութագրով ապրանքատեսակներ:

## **ՀՀ Ֆինանսների նախարարի հրամաններ**

Բացի ՀՀ կառավարության որոշումներից 2013թ ապրիլի 1-ից ՀՀ ՖՆ կողմից ընդունվել են մի շարք հրամաններ, մասնավորապես.

<sup>10</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docID=70190>

<sup>11</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docID=84633>

<sup>12</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docid=85342>

<sup>13</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docid=87190>

<sup>14</sup><http://www.arlis.am/documentview.aspx?docid=87287>

<sup>15</sup><https://www.e-gov.am/gov-decrees/item/24019/>

1. 2015թ. հունիսի 16-ի թիվ 397-Ա հրամանով փոփոխություններ են տեղի է ունեցել 2014թ. հունվարի 10-ի թիվ 7–Ա հրամանում: Փոփոխությունները պայմանավորված են էլեկտրոնային գնումներով իրականացվող ընթացակարգերի ընդլայնմամբ:
2. 2015թ. ապրիլի 27-ի թիվ 251-Ն հրամանով<sup>16</sup> փոփոխություններ և լրացումներ են կատարվել «ՀՀ ՖՆ 2012թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1169 հրամանում»<sup>17</sup>: Ըստ այդմ, որոշ փոփոխություններ են կատարվել «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման և գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգերում», մասնավորապես ավելի մեծացել է ծածկույթի մակարդակը<sup>18</sup> և համապատասխան տեղեկատվության փոխանցման ժամկետները:
3. Դիտարկվող ժամանակահատվածում փոփոխություն է կատարվել նաև գնումների գործընթացում կիրառվող փաստաթղթերի օրինակելի ձևերում, որոնք հիմնականում պայմանավորված են **ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմամբ, որով մասնավորապես գնային նախապատվություն է տրվում ԵԱՏՄ-ի երկրներից մասնակիցներին**:
4. Նմանատիպ խմբերում ներառվող գնման առարկաների ցանկը հաստատելու մասին (ՖՆ հրաման 485-Ն, ընդունված 14 հունիսի, 2013թ)
5. N 4 Պաշտոնական պարզաբանումը ուժը կորցրած ճանաչելու մասին (ՖՆ հրաման 613-Ա, ընդունված 24 հուլիսի, 2013թ)
6. Ռիսկերի գնահատման կարգը հաստատելու վերաբերյալ (ՖՆ հրաման 451-Ն, ընդունված 03 հունիսի, 2013թ)
7. Ֆինանսական միջոցներ չափանիշի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթի և դրա գնահատման կարգը հաստատելու մասին<sup>19</sup> (ՖՆ հրաման 500-Ն, ընդունված 20 հունիսի, 2013թ):
8. Մի շարք լրացումներ են կատարվել նախկին հրամաններում (ՖՆ հրաման 494-Ն, ընդունված 19 հունիսի, 2013թ):<sup>20</sup>
9. Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին (ՖՆ հրաման 667-Ա, ընդունված 02 օգոստոսի, 2013թ)
10. Հանձնման-ընդունման արձանագրության ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին (ՖՆ հրաման 673-Ն, ընդունված 06 օգոստոսի, 2013թ)

<sup>16</sup><http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=97994>

<sup>17</sup><http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=81251>

<sup>18</sup> 10-ՇՀ-ի փոխարեն 7, ՊԸ-ի դեպքում 5:

<sup>19</sup> Այս հրամանը կարևոր է այնքանով, որ դրական եզրակացություն չստացած աուդիտորական ընկերությունները չէին կարող մասնակցել գնումների համակարգին: Այնուհանդերձ հետագայում այս հրամանը վերանայվեց և ներկայումս աուդիտը պարտադիր պահանջ չէ:

<sup>20</sup> Օրինակ՝ ՖՆ հրաման 951-Ն, ընդունված 29 հոկտեմբերի, 2013թ, ՖՆ հրաման 20-Ն, ընդունված 13 հունվարի 2014թ

11. Որոշ ապրանքատեսակների առավելագույն գները սահմանելու մասին (ՖՆ հրաման 573-Ա, ընդունված 13 հուլիսի, 2013թ): Առավելագույն գների մասով պարբերաբար ընդունվել ու ընդունվում են ֆինանսների նախարարի հրամաններ<sup>21</sup>:
12. Ընդունվել են նաև որոշ գնման գործընթացների կասեցման մասին հրամաններ (օրինակ ՖՆ հրաման 708-Ա, ընդունված 16 օգոստոսի, 2013թ)
13. Հրամանով փոփոխվել է գնումների պլանի ձևը, լրացման կարգը, անվանացանկի ձևը (ՖՆ հրաման 896-Ն, ընդունված 10 հոկտեմբերի, 2013թ)
14. Սահմանվել են ծառայողական ավտոմեքենաների առավելագույն գները (ՖՆ հրաման 938-Ա, ընդունված 24 հոկտեմբերի, 2013թ)
15. Հաստատվել է էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը (ՖՆ հրաման 7-Ա, ընդունված 10 հունվարի, 2014թ)
16. Հաստատվել է «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ կապիտալ ծախսերի հիմքում դրվող ապրանքատեսակի կողմնորոշիչ գների ուսումնասիրության արժեքի ձևավորման մեթոդաբանությունը և ծառայության արժեքը (ՖՆ հրաման 137-Ա, ընդունված 21 փետրվարի, 2014թ)

## ՕՐԵՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԹԻՅԿ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

*Մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ 2011-2013 թԻՅԿ ՅԿ առաջարկությունները մեծամասամբ արդիական են:*

1. ԳՄՕ-ի 4-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ՀՀ կառավարության հաստատման ենթակա միջոցառումներից կատարված չեն.
  - պետական և մասնավոր հատվածների գործընկերության գործարքների տեսակները, այդ գործարքների բնութագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև բնութագրերի կազմման և հաստատման կարգը.
  - ԳՄՕ նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգը.
2. ԳՄՕ Հոդված 6-ի 4-րդ կետը<sup>22</sup> համատարած կերպով չի պահպանվում և չկան մեխանիզմներ նման երևույթների վերահսկողության համար:

<sup>21</sup>Շուրջ 61 հրամաններ, որոնցով առավելագույն գները փոփոխվել են:

<sup>22</sup>Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիստոն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:



3. Ղնումների մասին օրենքը նախատեսում է հաշվետվությունների հրապարակում /հոդված 8 կետ 5/, որը սակայն պատշաճորեն չի իրականացվում:
4. ՉՄՕ-ի 13-րդ հոդվածի 7 կետով սահմանվում է, որ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:<sup>23</sup> Այս դրույթը ֆինանսական միջոցների անարդյունավետ ծախսման հիմքեր է նախապատրաստում:
5. ՉՄՕ-ի հոդված 17-ի 6-րդ մասով սահմանվում է, որ գնումները կարող են կատարվել ապրանքի, աշխատանքի կամ ծառայության բորսաներից՝ ձեռքբերման ընթացակարգով, սակայն այս ընթացակարգը նկարագրված չէ, հետևաբար, կիրառելի չէ:
6. Դիտարկումները ցույց են տալիս, որ ՉՄՕ Հոդված 30-ի 6-րդ մասը, շահերի բախման և դրանց հայտարարագրման առումով չի իրականանում ու չկա պատշաճ վերահսկողություն դրա իրականացմանն կատմամբ: Մեր կարծիքով, խնդիրն էլ ավելի կոժվարանա վերահսկել էլ. գնումների ամբողջական ներդրման պարագայում:
7. ՉՄՕ-ի հոդված 21-ի 4-րդ կետի 2-րդ մասում նշվում է, որ փոփոխություններ կատարելու օրվան հաջորդող 3 օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում: Ցանկալի կլինի, որ մասնակիցները պարտադիր առնվազն էլ. Փոստի կամ կապի այլ միջոցներով տեղեկանան փոփոխության մասին:
8. ՉՄՕ Հոդված 37-ի 2-րդ մասը նշում է, որ պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Դիտարկումները վկայում են, որ նշված դրույթը ձևական բնույթ է կրում, քանի որ մինչ օրս գործոնային պայմանագիր չի կնքվել:
9. ՉՄՕ-ի Հոդված 48-ի 7 մասը սահմանում է, որ Ղնումների բողոքարկման խորհրդի (ԲԽ) կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար: Այնուհանդերձ, չնայած 2011-2015 թթ ընթացքում բավարարվել են բողոքների շուրջ 45% դրանցից և ոչ մեկում պատվիրատուն չի փորձել իրականացնել օրենքով իրեն վերապահված այս իրավունքը:

<sup>23</sup>Մույն մասը կարող է կիրառվել եթե՝ 1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, 2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվել ու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

10. ԳՄՕ-ի հոդված 52-ի 3 կետը սահմանում է, որ ԳՄՕ-ով հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակման կարգը պետք է սահմանի ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) խորհուրդը, սակայն կարգը դեռ սահմանված չէ: Թափանցիկության առումով համանման խնդիրներ են նկատվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի պարագայում: Չնայած հարկ է նշել, որ այս մարմինը մշակել է ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հրապարակային մրցույթների կազմակերպման մասին կարգ, սակայն այն չի համապատասխանում սահմանված պահանջներին, քանի որ չկան բողոքարկմանն առնչվող դրույթներ: Բացի այդ դիտարկվող ժամանակաշրջանում գնումների մասին հաշվետվություններ տեղադրված չէին:
11. Մոնիտորինգի արդյունքները փաստում են, որ դիտարկվող ժամանակահատվածում տեղի է ունեցել օրենսդրության և/կամ պրակտիկայով ամրագրված հաշվետվողականության սկզբունքների չկատարում:<sup>24</sup> Այս մասով երկիմաստություններից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել ձևակերպումները, տեղեկությունների ձևաչափը, ժամկետները խուսափելով կամայականություններից:<sup>25</sup>
12. Մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի գնային տեղեկությունները, որոնք հիմք էին հանդիսանում առավելագույն գների սահմանման համար ոչ միշտ են արտացոլում շուկայական իրավիճակը: Ավելին, առավելագույն գների ամրագրումը, ըստ էության, չի նպաստում նորամուծությունների խթանմանը:
13. Նախատեսվում էր, որ ՀՀ ֆինանսների նախարարը մինչև 2015 թվականի ապրիլի 30-ը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ պետք է ներկայացնի «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծի հայեցակարգը: **Մոնիտորինգը ցույց է տալիս, որ նախագիծը մոնիտորինգի ավարտի դրությամբ դեռևս ներկայացված չէր:**
14. ԹԻՀԿ ՀԿ փորձագետ Ա.Մանուկյանը բազմիցս բարձրաձայնել էր, որ ԵԱՏՄ անդամակցությամբ տեղի է ունենալու հետընթաց, քանի որ ՀՀ կառավարությունը ստիպված է լինելու ընդունել ՌԴ ԳՄՕ մեջ ամրագրված 15% գնային նախապատվության դրույթը:<sup>26</sup> Կառավարությունը պնդում և հավաստիացնում էր, որ գնային նախապատվություն չի նախատեսվում: Այնուհանդերձ ՀՀ կառավարության որոշմամբ սրբագրվեց, որ 2015թ. ապրիլից մինչև 70 մլն դրամ գնումների պարագայում ԵԱՏՄ անդամ երկրների մասնակիցներին կտրվի 15% գնային նախապատվություն: Կառավարության այն

<sup>24</sup>Մասնավորապես գնումների տարեկան հաշվետվությունների հրապարակման ժամկետները չեն պահպանվել:

Այս խնդիրը բարձրաձայնվել է տես նաև <http://www.aravot.am/2015/06/12/580661/>

<sup>25</sup>Համանման խնդիրներ են առկա ՇՀ-ի մասով տվյալների հրապարակման պարբերականության մասով:

<sup>26</sup><http://www.media-center.am/hy/1415103634>

պնդումները, որ սրանով հայրենական արտադրողներն ավելի պաշտպանված կլինեն ոչ մի քննադատության չի դիմանում: Ավելին, ԹԻՅԿ կարծիքով սրանով մեծանում է կոռուպցիոն ռիսկերի հավանականությունը:

15. Պետք է նշել, որ իրավակիրարկման մակարդակի բարելավում չի նկատվում, ինչը մեկտեղվում է թափանցիկության և գնումների աջակցման կենտրոնի տարեկան հաշվետվությունների որակի անկմամբ:

## ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Չնայած մոնիտորինգի ժամանակահատվածում տեղի են ունեցել մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնցով փորձ է կատարվել ֆորմալ առումով ապահովել ԹԻՅԿ Յ-ի առաջարկությունների մի մասի ապահովումը, սակայն պետք է փաստել, որ համակարգային բարելավումներ չեն նկատվում, իսկ ԹԻՅԿ ՅԿ նախկինում կատարված մի շարք առաջարկություններ մնացել են անարձագանք: Իսկ 15% գնային նախապատվության դրույթը թույլ է տալիս պնդել, որ ՅՅ պետական գնումների օրենսդրությունը հետընթաց է ապրել:*

1. 20 մլն դրամից բարձր գնումների պարագայում առաջարկվում է իրականացնել debriefing, ինչպես նաև քննարկումներ Յանրային խորհրդում:
2. Պետք է ստեղծել ԵԱՏՄ պետական գնումների միասնական պորտալ, ինչը հնարավորություն կընձեռի բարձրացնել հաշվետվողականությունը և թափանցիկությունը:
3. Ապահովել տեղեկատվության ներկայացումը հանրային կազմակերպությունների կողմից, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կայքերում գնումների մասին համապատասխան տեղեկատվության /օրինակ գնումների տարեկան հաշվետվության/ տեղադրումը:

## Մոնիտորինգային ուղղություն 2. Բողոքարկման համակարգի զարգացումներ

Մոնիտորինգի ժամանակահատվածը -2013թ.ապրիլի 1-ից – 2015թ.հունիսի 15

### ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տվյալ մոնիտորինգային ուղղության շրջանակներում ուսումնասիրվել են [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքի բողոքարկում խորագրում ներկայացված տեղեկությունը: Ներկայումս գնումների պաշտոնական կայքում [www.gnumner.am](http://www.gnumner.am) բողոքարկման համակարգի վերաբերյալ տեղեկություններն ամփոփված են հետևյալ խորագրերում.

1. Բողոքների վերաբերյալ կայացած որոշումներ,
2. Ներկայացված բողոքների վերաբերյալ հայտարարություններ,
3. Գնումների բողոքարկման հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա և ժամի վերաբերյալ տեղեկատվություն,
4. Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ-ի ներկայացրած եզրակացությունը բողոքի վերաբերյալ,
5. Գնումների բողոքարկման հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության վերաբերյալ հայտարարություններ:
6. Ծանուցում, որ գնումների բողոքարկման հանձնաժողովի նիստերին կարելի է հետևել առցանց:

Հարկ է նշել, որ 3-րդ, 4-րդ և 5-րդ խորագրերը ավելացել են ԹԻՅԿ առաջարկությունների արդյունքում:<sup>27</sup> Այս խորագրերի պարբերական մոնիտորինգի արդյունքում հրապարակվող տեղեկատվության առումով Էական ռիսկեր կամ բացթողումներ չեն արձանագրվել:

Բողոքների քննությունը առցանց դարձելու առաջարկը ներկայացվել է ԹԻՅԿ-ի կողմից, ընդգրկվել է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) 2014-2016թթ. Գործողությունների ազգային ծրագրում և 2015թ.հունիսից այն կիրառվում է: Այնուհանդերձ այս մասով ևս համակարգը չունի համակարգվածություն և կայունություն: Մոնիտորինգի ժամանակահատվածում կայքում առկա էին բողոքների քննության միայն մեկ տեսահոլովակ, այնուհանդերձ գնումների աջակցման կենտրոնի կողմից youtube-ում ներբեռնվել են ավելի մեծ թվով բողոքի քննության ֆայլեր, որոնք սակայն համակարգված բնույթ չեն կրում և իրականացվում են կամայականորեն:<sup>28</sup>

Պետք է նշել, որ կոռուպցիոն ռիսկերի առումով բողոքարկման համակարգը «այսբերգի» գազաթն է, քանի որ բողոքարկման համակարգը չի ապահովում հաղթած մասնակցին, անհիմն կերպով անբավարար ճանաչելու պարագայում, վերականգնվել՝

<sup>27</sup> Տես ԹԻՅԿ ՀԿ նախորդ հրապարակումները և առաջարկությունների քննարկումը ՖՆ-ի հետ:

<sup>28</sup> <https://www.e-gov.am/gnumner/> Առաջարկությունը կատարվել է Բաց Կառավարման Գործընկերության համատեքստում:

հաղթողճանաչելով: Ավելին, գնումների համակարգի կարևորագույն հիմնախնդիր է մնում ոչ օբյեկտիվ հիմունքներով ընտրությունը, որի արդյունք է մրցակցությանբացակայությունը:

## 2014թ.Բողոքների քանակական բնութագիրը

2014թ. բողոքարկման խորհրդի կողմից ընդունվել են 48 որոշումներ, որից ամբողջությամբ կամ մասամբ բավարարվել է 22-ը կամ ուսումնասիրվածների մոտ 46%-ը: Հարկ է նշել, որ բողոքների քանակը նախորդ տարվա համեմատ ավելացել է: Ստացված բողոքներից 24-ը մերժվել է:

Ի համեմատ 2011-2013թթ. դիտարկվող տարում էապես կրճատվել են առանց քննության թողնված բողոքների քանակը /2014թ. առանց քննության 2 բողոք նախորդ տարվա 10-ի փոխարեն/:<sup>29</sup> Հարկ է նշել, որ ըստ 2014թ. տարեկան հաշվետվության 2014թ. իրականացվել է շուրջ 18000 ընթացակարգ:<sup>30</sup> Բողոքների տեսակարար կշիռը կայացած ընթացակարգերում կազմում է 0.3%:

Առավել մանրամասն բողոքների քանակական բնութագիրը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գնումների համակարգում բողոքների քանակական բնութագիրը 2011-2015թթ.

	Առանց քննության		Բավ.		Մերժ.		Ընդամենը	
2011	6	23%	15	58%	5	19%	26	100%
2012	10	26%	17	45%	11	29%	38	100%
2013	10	20%	19	39%	20	41%	49	100%
2014	2	4%	22	45%	24	51%	48	100%
2015 <sup>31</sup>			14	47%	16	53%	30	100%

Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ 2014թ. նկատվել է բողոքների թվի կրճատում: Բողոքների կրճատումը մասամբ պայմանավորված է արագ արձագանքման ծառայության (թեժ գծի) գործունեության ակտիվացմամբ:<sup>32</sup>

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 4-րդ ենթակետի համաձայն, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ ԳԱԿ-ի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում, եթե պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը և վերջինս համաձայնում է անմիջապես այն վերացնել, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին

<sup>29</sup> Մրանք հիմնականում այն բողոքներն են, որոնք հետ են վերցվում դիմումատուների կողմից: Ըստ այդմ, եթե 2013թ. առանց քննության թողնված բողոքները կազմել էին ընդհանուրի 20%, ապա հաշվետու տարում՝ 4% :

<sup>30</sup> Տես 2014թ. տարեկան հաշվետվության էջ 14:

<sup>31</sup> 2015թ. Մեպտեմբերի 20-ի դրությամբ բողոքարկման խորհրդի կողմից ուսումնասիրված բողոքների թիվը կազմում է 30 բողոք:

<sup>32</sup> Գնումների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, գնումների աջակցման կենտրոնը գնումների վերաբերյալ ահազանգերի արձանագրման և հարցերին արագ արձագանքելու նպատակով ապահովում է գնումների աջակցության ծառայության թեժ գծի աշխատանքը:

տեղեկատվությունը պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է ԳԱԿ-ին:

Հաշվետու տարում թեժ գծով ստացված ահազանգերից 8-ի դեպքում (2013թ. եղել է նման ընդամենը մեկ դեպք), ԳԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների շտրիհով, արձանագրված խախտումներն անմիջապես վերացվել են, ինչի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածների համապատասխան գնումների ընթացակարգերի մասնակիցների կողմից գրավոր բողոք չի ներկայացվել ԲԽ-ին:

2015թ. սեպտեմբերի 20-ի դրությամբ բողոքարկման խորհրդի կողմից քննվել են 30 հայտարարություններ, որոնց արդյունքում բավարարվել են 14-ը և մերժվել 16-ը:

Ընդհանրացնելով անցած հինգ տարիների գործունեությունը, պետք է փաստել, որ այդ ընթացքում գնումների բողոքարկման խորհուրդը մասնակիցների կողմից ստացել է ընդհանուր առմամբ 191 բողոք, որոնցից ամբողջությամբ ել/կամ մասամբ բավարարվել է 87-ը կամ 46%: 76 բողոք կամ ստացվածների 40% մերժվել է: Առանց քննության թողնված բողոքների տեսակարար կշիռը կազմել է 15%:

ԹԻՅԿ-ի կողմից բազմիցս նշվել էր, որ շարունակական խախտումներ են կատարվում, մասնավորապես նույնիսկ լիցենզիա պահանջող գործունեության դեպքում պայմանագիր էր կնքվում նման լիցենզիա չունեցող սուբյեկտների հետ:<sup>33</sup> ***Ուրախալի է, որ ՖՆ որոշ դեպքերում նախաձեռնել է նման գործընթաց, սակայն մեր կողմից մտահոգություն կա, որ նման մոտեցումը կարող է կրել ընտրանքային բնույթ:***<sup>34</sup>

2014-2015թթ. ընթացքում նախաձեռնվել են մի շարք մասնակիցների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքով 21 բողոքների քննություն, որոնցից 19-ը բավարարվել են, իսկ երկուսի հանդեպ՝ Գոլդեն Մարկետ ՍՊԸ-ի և Նորթ ՏԿՎ-ի բողոքները մերժվել են: Ադյուսակ 2-ում ներկայացված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցները 2014-2015թթ.:

Ադյուսակ 2. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցները

	Մասնակիցը	Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկման վճռի կայացման ամսաթիվը
1	«Նայթեքս» ԲԲԸ	17.11.2014
2	«Ճարտարապետ Է. Հովսեփյան»	04.02.2015
3	«Իջևակի ՃՇՇ» ՓԲԸ	29.12.2014
4	«Հայլալ Միս» ՍՊԸ	29.12.2014
5	Ա/Ձ Գոռ Հունանյան	02.03.2015
6	Ֆ/Ա Աննա Աղաջանյան	27.11.2014
7	ՆՊԱՏ ՍՊԸ	28.11.2014
8	«ՀԱՆՍ ընդ. ԿՈ» ՍՊԸ	26.12.2014

<sup>33</sup>Տես ԹԻՅԿ «ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ.2011-2013թթ.»> հրապարակումը:

<sup>34</sup>Օրինակ Ջեմսիկո ՍՊԸ-ն հայտարարել է, որ Երևանի քաղաքապետարանի հետ կնքել է պայմանագիր և իրականացրել է աշխատանքներ առանց լիցենզիա ունենալու և դա չի բարձրաձայնվել:

9	Նոր Վերածնունդ ՍՊԸ	23.12.2014
10	Զեմսիկո ՍՊԸ	17.12.2014
11	Դիլ ՍՊԸ	10.04.2015
12	Կոնտինենտոտեքս ՓԲԸ	25.05.2015
13	Կուրացիո ՍՊԸ	09.03.2015
14	Յով-Գրիգ Շին ՍՊԸ	18.06.2015
15	Անգել ՍՊԸ	29.07.2015
16	Վեկար ՍՊԸ	14.08.2015
17	ՎԱՄՄ ՍՊԸ	14.08.2015
18	Ռախսա Մելքոնյանի գեղեցկության արվեստի դպրոց-ստուդիա	14.08.2015
19	«Մադոննա» ՍՊԸ	08.05.2015
	Ա/Ձ Անահիտ Խալաթյան	
	Ա/Ձ Վահրամ Մելքոնյան	
	Ա/Ձ Գառնիկ Վարդերեսյան	
	Ա/Ձ Ռաֆայել Գրիգորյան	

Ընդհանուր առմամբ մոնիտորինգի ժամանակահատվածում սահմանափակված են ևս երկու մասնակցի մասնակցություն՝ «Աշոտ Ավոյան» ՍՊԸ<sup>35</sup>և «Ունիվերսալօրդեր» ՍՊԸ<sup>36</sup>:

### Գնումների բողոքարկման որակական բնութագիրը

Հաշվետու ժամանակահատվածում բողոքարկման խորհուրդ ներկայացված դիմումները վերաբերել են տարբեր խնդիրների: Հատկանշական է, որ որոշ բողոքներում ներկայացվում են փաստեր, որոնցից ակնհայտ է դառնում, որ պատվիրատուները դրսևորում են խտրական վարքագիծ, ինչը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս:

2014թ. ընթացքում մասնակիցները բողոքարկել են շուրջ երեք տասնյակ պատվիրատուների մրցույթների հանձնաժողովների գործողությունները: Առավել հաճախ բողոքներն առնչվել են ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպած ընթացակարգերին:<sup>37</sup> ՊՆ կազմակերպած ընթացակարգերի նկատմամբ ներկայացված բողոքները կազմել են բողոքարկման խորհրդի ստացած դիմումների 15%-ը, նախորդ տարվա 27% դիմաց: Այնուհանդերձ պետք է նշել, որ ՊՆ հանդիսանում է խոշորագույն պատվիրատուն, թե քանակային, թե գումարային առումով ինչով էլ որոշակիորեն պայմանավորված են ամենաշատ բողոքները ըվյալ պատվիրատուի նկատմամբ:

Համեմատության համար նշենք, որ 2015թ. առաջին կիսամյակում ՊՆ կողմից իրականացվել են ավելի քան 500 ընթացակարգեր, մինչդեռ ներկայացվել է ընդամենը 4 բողոք, ինչը կազմում է ընթացակարգերի 0.8%:

<sup>35</sup> Սահմանափակումը լրանում է 13.09.2016

<sup>36</sup> Սահմանափակումը լրանում է 05.09.2016

<sup>37</sup> Ընդհանուր առմամբ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ ՊՆ իրականացրած գնումների վերաբերյալ բողոքարկման խորհուրդը ստացել է 7 դիմում՝ /2013թ. 13-ի դիմաց/, որից 4-ը բավարարվել է:

Բավականաչափ մեծ թիվ են կազմում առողջապահության ոլորտում գործող պատվիրատուների կողմից կազմակերպված ընթացակարգերին առնչվող բողոքները:<sup>38</sup>

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հանդիսանում է ամենաշատ բողոք ներկայացրած մասնակիցը /երեք անգամ, որից երկուսը բավարարվել են/: Պատվիրատուների գործողությունները երկուսական անգամ բողոքարկել են «Լիգա պյուս» ՍՊԸ-ն և «Մեծ Զիմբ» ԱԿ-ն:

### Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների ներգրավվածության մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատվածում գնումների բողոքարկման խորհրդի (ԲԽ) անդամների կազմում ընդգրկված են եղել 72 անձ /Տես Զավելված 1/: Աղյուսակ 3-ում բերված են միայն այն 41 անդամների տվյալները, որոնք գոնե մեկ անգամ ընդգրկվել են բողոքարկման հանձնաժողովի կազմում:

Աղյուսակ 3. Բողոքարկման խորհրդի անդամների կազմը և ընդգրկվածությունը

No	Անուն ազգանուն	Պաշտոնը	2014թ.	Մասնաբաժինը (%)
1	Ենոքյան Գոռ	Հայաստանի փրկարար ծառայության Նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ-գնումների և մատակարարման բաժնի պետ	16	12.5
2	Մնացականյան Արման	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ	13	9.8
3	Ոսկանյան Լուսինե	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ	11	8
4	Ֆրանգյան Ազգանուշ	Սպիտակի համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան	10	7.1
5	Գասպարյան Համլետ	ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության գլխավոր մասնագետ	1	0.9
6	Չոբանյան Ռոման	ՀՀ քննապահականության նախարարության աշխատակազմի գնումների գործընթացի իրականացման բաժնի պետ	4	1.8
7	Շախկյան Էդուարդ	ՀՀ Էներգետիկայի և քնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ	2	0.9
8	Մնացականյան Արայիկ	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-բաժնի պետի տեղակալ	3	2.7
9	Խաչատրյան Լեռնիկ	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	2	1.8

38 Այդպիսի դիմումներ են ստացվել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի, ՀՀ ԱՆ «Վ.Ա.Ֆանաբջյանի անվան ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի, «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲԸ-ի, «Երեւանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի, ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ի իրականացրած գնման գործընթացների վերաբերալ:



10	Սերայդարյան Հովհաննես	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ	3	2.7
11	Մխիթարյան Աննա	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների գործի համակարգման բաժնի պետ	2	1.8
12	Հակոբյան Էդգար	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ	2	1.8
13	Թամարյան Դավիթ	ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, ապրանքների և ծառայությունների գծով գնումների համակարգող	2	1.8
14	Ավագյան Ավագ	Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի տեղակալ	3	2.7
15	Զիլինգարյան Վարդգես	Չարենցավանի քաղաքապետի տեղակալ	1	0.9
16	Խարբերյան Կարապետ	Էջմիածնի քաղաքապետի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ	3	2.7
17	Ավետիսյան Հրաչյա	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության ավագ խորհրդատու	2	1.8
18	Վարդանյան Սերոբակ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	2	1.8
19	Մկրտչյան Վարազդատ	ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ	2	1.8
20	Խյոյան Ռուբեն	Վարդենիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ	1	0.9
21	Պողոսյան Լիդիա	Բյուրեղավանի քաղաքային համայնքի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ	3	2.7
22	Նազարյան Մանե	Այրումի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /գլխավոր հաշվապահ/	2	1.8
23	Աղաջանյան Սուսաննա	Աբովյանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գնումների գծով մասնագետ	2	1.8
24	Նիկոլայան Նարինե	Քաջարանի քաղաքային համայնքի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	2	1.8
25	Գրիգորյան Էդվարդ	«Իրավական մշակույթի զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի նախագահի խորհրդական	2	1.8
26	Բաբայան Վահե	«Մեհրաբյան գիտա-ուսումնական կետրոն» հասարակական կազմակերպության նախագահ	1	0.9
27	Հայրապետյան Ռազմիկ	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ	1	0.9
28	Խաչատրյան Գևորգ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ	3	2.7
29	Հովհաննիսյան Արուսյակ	ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-բաժնի պետի տեղակալ	1	0.9
30	Բաղդասարյան Արթուր	ՀՀ ԱԳՆ աշխատակազմի գնումների համակարգող	2	1.8
31	Կարապետյան Աիդա	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ	2	1.8
32	Ներսիսյան Ռուդիկ	ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ	1	0.9
33	Նամայան Արմինե	ՀՀ մարդու իրավունքներ պաշտպանի աշխատակազմի գնումները համակարգող	2	1.8

34	Սամվելյան Երանուհի	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ	2	1.8
35	Չաբարյան Յուրի	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գնումների և մատակարարումների բաժնի պետ	1	0.9
36	Հայրապետյան Գևորգ	<Ինֆորմացիայի ազատության կենտրոն> ՀԿ	3	2.7
37	Գրիգորյան Արամ	Համատիրությունների նախագահների ասոցացիա	2	1.8
38	Գրիգորյան Գոռ	Հայաստանի Հանրապետության դատավորների միություն	2	1.8
39	Հովհաննիսյան Հարություն	Գորիսի քաղաքապետարանի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ	1	0.9
40	Հարությունյան Աշոտ	Եղեգնաձորի համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ	1	0.9
41	Վիկտորյա Ղազարյան	-	2	1.8
	Ընդամենը		130	

Ինչպես տեսնում ենք 191 բողոքների քննության պարագայում ԲԽ 72 անդամից /տես Հավելված 1/ <sup>39</sup>միայն 41 անդամ են մասնակցել, ինչը կասկածի տակ է դնում ռոտացիոն համակարգի պատահական ընտրության ալգորիթմի առկայությունը: Այդ կասկածներն ավելի են խորանում, երբ նկատում ենք դեպքեր, երբ բողոքների քննման գործընթացին են մասնակցում ԲԽ ցանկում չներկայացված անդամներ:

Հարկ է նշել, որ փորձ է կատարվել ֆորմալ առումով կատարել նախկինում մեր կողմից կատարված առաջարկը, մասնավորապես լրացվել է «խորհրդի կազմում ընդգրկման ամսաթիվը» սյունակը: Այնուհանդերձ, նույնիսկ ոչ խորքային ուսումնասիրությունը վկայում է նշված մոտեցման ձևական լինելը, քանի որ բոլոր խորհրդի անդամների ընդգրկման ժամանակահատված է նշված 01.04.2011, մինչդեռ այդ ժամանակահատվածում ՀԿ ներկայացուցիչ չկար:

#### Աղյուսակ 4. Հանձնաժողովի կազմում չընդգրկված անդամները

Անուն Ազգանունը	Պաշտոնը
Մկրտչյան Արամ	ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ
Մանուչարյան Մարատ	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գնումների և մատակարարումների բաժնի պետ
Մկրտչյան Հովիկ	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի խորհրդական
Մաթևոսյան Էդուարդ	Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի գլխավոր աուդիտոր
Հովհաննիսյան Արթուր	Այլվերդու քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ
Անտոնյան Բենիամին	Նոր Հաճրնի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
Բուդաղյան Արտեմ	Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավարի օգնական
Կարապետյան Լիանա	Ազարակի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ
Արամ Հովսեփյան	Վայքի քաղաքապետարանի գնումների համակարգող
Թադևոսյան Ռուդիկ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետ
Ավետիսյան Արթուր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետ
Կոչեցյան Հայկ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ
Մարդոյան Ռոման	ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսագիտական

<sup>39</sup> Մոնիտորինգի ժամանակահատվածում գնումների բողոքարկման խորհրդի անդամների կազմում ընդգրկված են եղել 72 անձ, որից միայն հինգն են ներկայացնում հանրային հատվածը <http://gnumner.am/download/135096.html>

	վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ
Հարությունյան Սամվել	ՀՀ ԱԻՆ <Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի ֆինաստնտեսագիտական և գործերի կառավարման բաժնի պետ
Գալստյան Տիգրան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական եւ հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Թամրազյան Սամվել	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ
Խնձրցյան Խաչատուր	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
Սիմոնյան Հովսեփ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Սարգսյան Վոլոդյա	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Մանուկյան Կարինե	ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության գնումների համակարգող
Սաֆարյան Վարդան	ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի ֆինանսահաշվապահական բաժնի առաջատար մասնագետ
Նալբանդյան Մարտիկ	ՀՀ գյուղատնտեսության նախարարության մենթամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի գործերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
Ապերյան Արթուր	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսա բյուջետային բաժնի առաջատար մասնագետ
Մարտիրոսյան Հարություն	ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գործերի կառավարման վարչության պետի տեղակալ
Ղազարյան Գուրգեն	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Գործերի կառավարման վարչության գնումների և շինարարության բաժնի գլխավոր մասնագետ

## ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկ է նշել, որ մոնիտորինգի ընթացքում [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքի բողոքարկման բաժինը պատշաճորեն չէր սպասարկվում, մասնավորապես թարմացումներ չէին իրականացվում, ինչը ԹԻՀԿ կողմից բարձրաձայնվելուց հետո որոշակի ժամանակահատված հետո շտկվեց:

Հարկ է նշել, որ 2014թ. ընթացքում եականորեն սվազել են առանց քննության թողնված բողոքները, ինչը դրական զարգացում է:

